ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԱՄ-2018/115, 26.12.2018թ.

Բողոք ներկայացնող անձ՝ «Սոլար Էներջի Սիստեմ Սոլութիոնս» ՍՊԸ

Պատվիրատու՝ «Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ»

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝ «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2018/71» ծածկագրով գնանշման հարցում, ՀՀ Լոռու մարզի Ահնիձոր բնակավայրի նախակրթարանի արևային ցածր ճնշման ջրատաքացուցիչի տեղադրման աշխատանքների ձեռքբերում:

Բողոքի պահանջը՝

1. Դադարեցնել «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2018/71» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի «Սոլար Էներջի Սիստեմ Սոլութիոնս» ՍՊԸ-ի կողմից թիվ 2 հավելվածով ներկայացված հայտարարությունը իրականությանը չհամապատասխանող համարելու և ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների մասով Ընկերությունից լրացուցիչ տեղեկատվություն ներկայացնելու մասին որոշումները:
2. Պարտավորեցնել «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2018/71» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին «Սոլար Էներջի Սիստեմ Սոլութիոնս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված թիվ 2 հավելվածը՝ ՀՀ հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ չունենալու մասով, գնահատել իրականությանը համապատասխանող:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Մ. ԱՆԱՆՅԱՆ, ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Տ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Տեղեկացնում ենք, որ բողոքի քննության նպատակով հրավիրվող նիստերին առցանց կարող եք հետևել https://www.e-gov.am/gnumner/ հղումով կայք-էջում:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Սույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,

51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման՝ ուժի մեջ մտնելու օրը ներառյալ:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին

Բողոք բերող՝ «ՍՈԼԱՐ ԷՆԵՐԳԻ ՍԻՍՏԵՄ ՍՈԼՈՒԹԻՈՆՆ» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Կորյունի 8/4
Հեռ: +37443100007
էլ.փոստ՝ sessolutions@yahoo.com

Պատվիրատու՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցե՝ ՀՀ ք.Երևան, Ուլնեցի 31

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կարիքների համար «ՀՀ Լոռու մարզի Անիծոր բնակավայրի նախակրթարանի արևային ցածր ճնշման ջրատաքացուցիչի տեղադրման» աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2018/71» ծածկագրով գնանշման հարցում

ԲՈՂՈՔ

- **Բողոքի նախապատմությունը և փաստերը**

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կարիքների համար կազմակերպվել է «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2018/71» ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ՝ նաև՝ Ընթացակարգ), որին 17.12.2018թ. մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ՍՈԼԱՐ ԷՆԵՐԳԻ ՍԻՍՏԵՄ ՍՈԼՈՒԹԻՈՆՆ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև՝ Ընկերություն) և ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Այնուհետև, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հարցում է կատարել ՀՀ ԿԱ ՊԵԿ՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:

Ի պատասխան վերոնշված հարցման՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից տրվել է եզրակացություն, համաձայն որի «ՍՈԼԱՐ ԷՆԵՐԳԻ ՍԻՍՏԵՄ ՍՈԼՈՒԹԻՈՆՆ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ /17.12.2018թ./ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություն 18,000 ՀՀ դրամ:

Այնուհետև, գնահատող հանձնաժողովը, առաջնորդվելով Կարգի 44-րդ կետի պահանջներով, գնահատող հանձնաժողովը 24.12.2018թ. էլեկտրոնային եղանակով ծանուցել է «ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍՏԵՄ ՍՈԼՈՒԹԻՈՆՆՍ» ՍՊԸ-ին՝ հայտնելով, որ «ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍՏԵՄ ՍՈԼՈՒԹԻՈՆՆՍ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ Ընկերության կողմից ներկայացրած հայտարարությունը համարվել է իրականությանը չհամապատասխանող և Ընկերությանը առաջարկվել է գնումների մասին ՀՀ օրենքդրությամբ սահմանված ժամկետում շտկել նշված սխալները պարտավորությունները:

- <u>Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները.</u>

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ *հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով* ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ.

Հայտնում ենք, որ «ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍՏԵՄ ՍՈԼՈՒԹԻՈՆՆՍ» ՍՊԸ-ի մոտ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ առկա ժամկետանց հարկային պարտավորությունը առաջացել է <<ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին>> ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարման գծով:

Նախ, պետք է նշել, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2017թ. հուլիսի 19-ի թիվ 228-Ն հրամանի (հրապարակված է www.arlis.am համակարգում) համաձայն՝ սահմանվել է վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տրվող տեղեկանքի ձև, որտեղ որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն <<ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին>> ՀՀ օրենքի համաձայն՝ *վճարման ենթակա դրոշմանիշների վճարը ընդհանրապես նախատեսված չէ:*

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի արդեն 2018թ. ապրիլի 11-ի թիվ 245-Ն հրամանի (հրապարակված է www.arlis.am համակարգում) համաձայն՝ սահմանվել է վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տրվող տեղեկանքի նոր ձև, որտեղ որպես հարկային

մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն <<ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին>> ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա *դրոշմանիշների վճարը նույնպես նախատեսված չէ:*

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կարիքների համար կազմակերպվել է «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2018/71» ծածկագրով գնանշման հարցման շրջանակներում բացահայտվել է, որ Ընկերությունը ունի հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն՝ <<ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին>> ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարի գծով (նման պարտավորության առկայության փաստը մինչ այդ երբեիցե չի ներկայացվել ՊԵԿ-ի կողմից):

<<Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի>> բաղվածքի համաձայն՝ «ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍՏԵՄ ՍՈԼՈՒԹԻՈՆՍ» ՍՊԸ-ն 17.12.2018թ. դրությամբ հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ չունի: Եվ պետք է նշել, որ Ընկերության միասնական հաշվի պատկերում արտացոլված չէ դրոշմանիշների վճարի վերաբերյալ որևէ տեղեկատվություն, և «ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍՏԵՄ ՍՈԼՈՒԹԻՈՆՍ» ՍՊԸ-ի հայտը ներկայացրել է՝ հիմք ընդունելով <<Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի>> տվյալները, ըստ որի՝ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (17.12.2018թ.) ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ չուներ:

Գտնում ենք, որ նման դեպքում արձանագրված պարտավորությունը չի կարող դիտարկվել «ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍՏԵՄ ՍՈԼՈՒԹԻՈՆՍ» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն, և համապատասխանաբար Ընկերության կողմից ներկայացված համապատասխան հայտարարությունը չի կարող գնահատվել իրականությանը չհամապատասխանող և Ընկերությանը չի կարող տրվել անհամապատասխանությունները շտկելու հնարավորություն:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների մասին կանոնների բողոքներ քննող անձին

ԽՆԴՐՈՒՄ ԵՄ՝

- Դադարեցնել «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2018/71» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի «ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍՏԵՄ ՍՈԼՈՒԹԻՈՆՍ» ՍՊԸ-ի կողմից թիվ 2 հավելվածով ներկայացված հայտարարությունը իրականությանը չհամապատասխանող համարելու և ՀՀ

պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների մասով Ընկերությունից լրացուցիչ տեղեկատվություն ներկայացնել պահանջելու մասին որոշումները:

• Պարտավորնցնել «ՀՇ-ԳՀ-ԱՇՁԲ-2018/71» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին «ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍՏԵՄ ՍՈԼՈՒԹԻՈՆՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված թիվ 2 հավելվածը՝ ՀՀ հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ չունենալու մասով, գնահատել իրականությանը համապատասխանող:

Առդիր 3 թերթ:

Հարգանքներով՝

«ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍՏԵՄ ՍՈԼՈՒԹԻՈՆՍ» ՍՊԸ-ի տնօրեն

26.12.2018թ.